



Եվրոպայում անվտանգության և
համագործակցության կազմակերպություն
Երևանյան գրասենյակ

ԵԱՀԿ գրասենյակը աջակցում է տեղի ձեռնարկատիրություն զարգացման կենտրոնին Սյունիքում

ԿԱՊԱՆ, 26 հունիսի 2009 - Այսօր Սյունիքի Կապան մարզկենտրոնում տեղի ունեցավ փոքր և միջին ձեռնարկատիրությանը պետական աջակցություն տրամադրող ներկայացուցչության բացումը՝ Սյունիքում ԵԱՀԿ ծրագրերի իրականացման ներկայացուցչության աջակցությամբ:

ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի ղեկավար դեսպան Սերգեյ Կապինսոսը և ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը մասնակցեցին Հայաստանի Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոնի /ՓՄՁ ՋԱԿ/ տեղի ներկայացուցչության պաշտոնական բացման միջոցառմանը:

Նոր գրասենյակը կխթանի Հայաստանի կառավարության կողմից առաջարկվող պետական ծրագրերի և գործիքների հասանելիությունը տեղի գործարարների համար:

«ԵԱՀԿ կողմից ներկայացուցչության աջակցության առանցքային նպատակներից է խթանել այս հեռավոր մարզի կայուն զարգացումը», - ասաց ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի ղեկավար դեսպան Սերգեյ Կապինսոսը. «Նոր գրասենյակը մեր՝ փոքր և միջին ձեռնարկատիրությանն աջակցելուն միտված ջանքերը կդարձնի առավել արդյունավետ և կօգնի հզորացնել տեղի ներուժը՝ դիմակայելու վերջերս հանքարդյունաբերական ոլորտի անկման հետևանքով կտրուկ խորացած տնտեսական և սոցիալական խոցելիությանը մարզում»:

ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը հավելեց. «Աջակցությունը փոքր և միջին ձեռնարկատիրությանը՝ կառավարության տնտեսական քաղաքականության կարևորագույն առաջնահերթություններից է: Փոքր և միջին ձեռնարկատիրության աջակցության համակարգի հզորացումը առանցքային է՝ տեղի տնտեսական զարգացմանն աջակցելու և գլոբալ տնտեսական ճգնաժամի արդյունքները տեղական մակարդակում հաղթահարելու»:

ՓՄՁ ՋԱԿ գործադիր տնօրեն Իշխան Կարապետյանը նշեց, որ ներկայացուցչությունը կօգնի իրականացնել տեխնիկական և ֆինանսական աջակցության ծրագրեր, տրամադրել աջակցություն սկսնակ գործարարներին, ինչպես նաև օգնել տեղի փոքր և միջին ձեռնարկությունների կողմից ներկայացվող ծրագրերի իրականացմանը:

Տեղի գործարարները նաև ունեցան հանդիպումներ և քննարկումներ վարչապետի և ԵԱՀԿ գրասենյակի ղեկավարի հետ:

Լրացուցիչ տեղեկության համար խնդրում ենք դիմել ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի մամուլի և հանրային տեղեկատվության հարցերով ավագ օգնական Գայանե Տեր-Ստեփանյանին հետևյալ հեռախոսահամարներով՝ (+374 10) 22 96 10/ 11/12/13/145407, քջջ. (091) 012603.